

**ՀԱՍՏԻՔ՝ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**

**ՎԱՅՐԸ՝ Երևան, ՀՀ**

**ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏ՝ 17.02.2019**

**ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ամբողջ դրույք**

**ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ՝ անմիջապես**

**ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ երկարաժամկետ**

«Ամերիա» ՓԲԸ-ն փնտրում է նպատակալաց, զարգացած վերլուծական հմտություններ ունեցող և կազմակերպված թեկնածուների՝ ընկերության Կառավարման խորհրդատվական ծառայությունների թիմում հետազոտությունների գծով խորհրդատուի թափուր պաշտոնը համալրելու համար: Հետազոտությունների գծով խորհրդատուն պատասխանատու է լինելու կորպորատիվ հաճախորդների համար իրականացվող հետազոտությունների, ինչպես նաև մակրոտնտեսության, տնտեսության տարբեր ոլորտների, ժողովրդագրության և սոցիալական ոլորտների վերաբերյալ հանրային խորհրդատվական ծրագրերի շրջանակներում իրականացվող հետազոտությունների արդյունքների մշակման, վերլուծության և ներկայացման համար:

**Հիմնական պարտականությունները**

- Սահմանված ծրագրերի համար հետազոտության սխեմայի և գործողությունների պլանի մշակում
- Երկրորդական տվյալների հավաքագրում, փաստաթղթերի ուսումնասիրություն և վերլուծությունների իրականացում
- Սոցիալ-տնտեսական ժամանակային շարքերի տվյալների բազաների վարում և թարմացում
- Համագործակցություն հետազոտական ծրագրերի շրջանակներում արտապատվիրված ծառայություններ մատուցող ընկերությունների հետ
- Որակական և քանակական հարցումների համար գործիքների մշակում և հավաքագրված նախնական տվյալների վերլուծություն
- Իրականացված հետազոտությունների վերաբերյալ ներքին և արտաքին հաշվետվությունների կազմում
- Մասնակցություն շահառուներին հետազոտության արդյունքների ներկայացման գործընթացին
- Մասնակցություն այլ ծրագրերի որպես փորձագետ՝ իր կարողությունների շրջանակներում

**Պահանջվող հմտությունները և փորձը**

- Հետազոտությունների մշակման և իրականացման փորձ
- Զարգացած վերլուծական հմտություններ, թվերի հետ աշխատելու ունակություն
- Տվյալների ճշգրտությունը պահպանելու ունակություն, ուշադրություն մանրուքների հանդեպ
- Ներանձնային շփման և հաղորդակցման գերազանց հմտություններ
- Զարգացած ներկայացուցչական հմտություններ
- Լարված և մարտահրավերներով լի աշխատանքային միջավայրում աշխատելու կարողություն
- Բազմաֆունկցիոնալ թիմում աշխատելու կարողություն
- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, վիճակագրության, մաթեմատիկայի կամ այլ հարակից ոլորտում
- Անգլերենի գերազանց իմացությունը (գրավոր և բանավոր) պարտադիր է, ռուսերենի լավ իմացությունը կդիտվի որպես առավելություն

Մրցույթին մասնակցելու համար խնդրում ենք լրացնել դիմում/հայտի ձևը, ցանկության դեպքում կցել նաև CV-ն և ուղարկել հետևյալ էլ. փոստին՝ [hr@ameriagroup.am](mailto:hr@ameriagroup.am):

*Նամակի վերնագրում խնդրում ենք նշել պաշտոնի անվանումը:*

Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները: